ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2020թ. պետական բյուջեի կատարման հաշվետվության հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2017-2019թթ.



* <<ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին >> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունմամբ անվանական ՀՆԱ-ի ծրագրված մակարդակը 7095.1 մլրդ դրամի փոխարեն կանխատեսվել էր 6170.2 մլրդ դրամ:



* <<ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին >> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունմամբ ՀՆԱ-ի իրական աճի ծրագրված մակարդակը 4.9 տոկոսի փոխարեն կանխատեսվել է -6.8 տոկոս





2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ, ՀՆԱ-ի 101.9% դեֆլյատորի պարագայում, կազմել է 6 տրիլիոն 183.7 մլրդ դրամ՝ պետական բյուջեով 2020 թվականի համար ծրագրված 7 տրիլիոն 95.1 մլրդ դրամի (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 103 %), ՄԺԾԾ-ով 2020 թվականի համար ծրագրված 6 տրիլիոն 975.4 մլրդ դրամի դիմաց (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 103 %) և 2019 թվականի 6 տրիլիոն 569 մլրդ դրամի դիմաց (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 101.5 %) :

2020 թվականին ՀՀ տնտեսությունը, կրելով համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցությունները, արձանագրել է 7.6 % անկում՝ նախապես պետական բյուջեով և 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով ծրագրված 4.9% ՀՆԱ-ի իրական աճի, 2019 թվականի 7.6% և 2018 թվականի 5.2% ՀՆԱ-ի իրական աճերի դիմաց: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունը տնտեսական անկման այս ցուցանիշով ԵԱՏՄ գործընկեր-երկրների և Վրաստանի հետ համեմատությամբ զիջում է միայն Ղրղզստանին, որտեղ ՀՆԱ-ի անկումը կազմել է 8% (2019 թվականին ՀՀ-ն 7.6 % տնտեսական աճի ցուցանիշով առաջատար էր): Ընդ որում, վերոնշյալ երկրներում ամենացածր տնտեսական անկումն արձանագրվել է Բելառուսի Հանրապետությունում՝ ՀՆԱ-ի 0.9% իրական անկում, իսկ *Ռուսաստանի Դաշնությունում տնտեսության անկումը կազմել է 3.1 %, Ղազախստանում՝ 2.6 % և Վրաստանում՝ 6.1 %:

2020 թվականին Հայաստանում ՀՆԱ-ի նվազմանը ամենամեծ նպաստումն ունեցել է ծառայությունների ճյուղը՝ -5.3%-ային կետ, պետական բյուջեով ծրագրված 3.1 %-ային կետի և 2019 թվականի 5.2 %-ային կետի դիմաց: Արդյունաբերության նպաստումը կազմել է -0.3 %-ային կետ՝ ծրագրված 0.9 %-ային կետի և 2019 թվականի 1.9 %-ային կետի դիմաց: Շինարարության ճյուղի նպաստումը կազմել է -0.4 %-ային կետ՝ ծրագրված 0.3 %-ային կետի և 2019 թվականի 0.3 %-ային կետի դիմաց: Զուտ անուղղակի հարկերը ՀՆԱ-ի անկմանը նպաստել են -1.1 %-ային կետով՝ ծրագրված 0.6%-ային կետի և 2019 թվականի 0.7 %-ային կետի դիմաց: 2020 թվականին գյուղատնտեսության ազդեցությունը ՀՆԱ-ի աճի վրա ևս եղել է բացասական՝ -0.5 %-ային կետ՝ ծրագրված 0.1 %-ային կետ դրական նպաստման և 2019 թվականի -0.5 %-ային կետի դիմաց:

*Աղբյուրը Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2020 թվականի և 2021 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույցներ

ԱԺԲԳ









Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականին կազմել է 30.2%, որը 9.0 %-ային կետով ցածր է ծրագրված մակարդակից և 11.1 %-ային կետով ցածր է 2019 թվականի ցուցանիշից: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 39.6 %՝ 12.9 %-ային կետով պակաս քան ծրագրված էր և 15 %-ային կետով պակաս քան 2019 թվականին էր: Արդյունքում ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2020 թվականին կազմել է -9.3%՝ 4.1 %-ային կետով բարելավելով 2019 թվականի և 4.4 %-ային կետով բարելավելով 2018 թվականի ցուցանիշը:

2020 թվականին 2019 թ. նկատմամաբ 4.1 %-ային կետով բարելավվել է ընթացիկ հաշիվ / ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով -3.1 %: 2020 թվականի համար ծրագրված էր -6.0 %:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2020 թ. կազմել է 7103.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.2%-ով: Ընդ որում, առևտրային հաշվեկշիռ / ՀՆԱ ցուցանիշը 2020 թվականին կազմել է -10.5 %՝ 2.7 %-ային կետով բարելավելով 2019 թվականի և 3.6 %-ային կետով բարելավելով 2018 թվականի ցուցանիշները:

Միջին գնաճը 2020 թ.-ին արձանագրվել է 1.2 %-ի մակարդակում՝ պետական բյուջեով ծրագրված 2.1 %-ի, ՄԺԾԾ-ով կանխատեսված 3.1 %-ի և 2019 թ.՝ 1.4 %-ի դիմաց: Իսկ գնաճը ժամանակաշրջանի վերջում 2020 թվականին կազմել է 3.7%՝ պետական բյուջեով ծրագրված 4+-1.5 %-ի, ՄԺԾԾ-ով կանխատեսված 3.6 %-ի և 2019 թ.՝ 0.7 %-ի դիմաց:

2020 թ. պետական բյուջեի եկամուտները կազմել են1 տրիլիոն 560.7 մլրդ դրամ, ինչը կազմում է 2020 թ. համար հաստատվածի 92.1 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 91.2 %-ը, իսկ 2019 թվականի մակարդակից պակաս է 0.3 %-ով կամ 4.8 մլրդ դրամով:

2020 թ.-ին պետական բյուջեի ծախսերը կազմել են 1 տրիլիոն 894.6 մլրդ դրամ, ինչը կազմում է 2020 թվականի համար հաստատված մակարդակի 102.1 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 101.2 %-ը և գերազանցում է 2019 թվականի մակարդակը 16.3 %-ով կամ 265.2 մլրդ դրամով:

2020 թ. պետական բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 334 մլրդ դրամ, ինչը 2020 թ. հաստատված մակարդակը և ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշին գերազանցում է շուրջ 2.1 անգամ, իսկ 2019 թ. մակարդակից ավել է 5.2 անգամ կամ 270.1 մլրդ դրամով:

2020 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 25.2 %՝ պետական բյուջեով ծրագրված մակարդակից 1.3 %-ային կետով ավել, ՄԺԾԾ-ով կանխատեսվածից 0.7 %-ային կետով ավել և 2019 թվականի մակարդակից 1.4 %-ային կետով ավել:

ԱԺԲԳ



* <<ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին >> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի հիմնավորման մեջ հարկային եկամուտների և պետական տուրքերի մակարդակը կանխատեսվել է1320.5 մլրդ դրամ՝ հաստատված 1602.2 մլրդ դրամի փոխարեն:







2020 թ. պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 30.6 %՝ պետական բյուջեով ծրագրված մակարդակից 4.4 %-ային կետով ավել, ՄԺԾԾ-ով կանխատեսվածից 3.8 %-ային կետով ավել և 2019 թվականի մակարդակից 5.8 %-ային կետով ավել:

2020 թ. պետական բյուջեի պակասուրդ(դեֆիցիտ)/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է -5.4 %՝ 3.1 %-ային կետով վատթարացնելով պետական բյուջեով ծրագրված և ՄԺԾԾ-ով կանխատեսված մակարդակները, իսկ 2019 թվականի մակարդակի նկատմամբ վատթարացումը կազմել է 4.4 %-ային կետ:

2020 թվականի պետական բյուջեի եկամուտները փաստացի ձևավորվել են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 1 տրիլիոն 385.2 մլրդ դրամ, որը կազմում է 2020 թվականի հաստատված մակարդակի 86.5 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածի 85.4 %-ը և 2019 թվականի ցուցանիշին զիջում է 5.4 %-ով կամ 79.1 մլրդ դրամով,
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 53.2 մլրդ դրամ, որը կազմում է 2020 թվականի հաստատված մակարդակի 150.7 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածից ավել է 71.6 %-ով և գերազանցում է 2019 թվականի ցուցանիշը 4.3 անգամ կամ 40.8 մլրդ դրամով,
- այլ եկամուտներից՝ 122.2 մլրդ դրամ, որը կազմում է 2020 թվականի հաստատված մակարդակի 212.9 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածից ավել է շուրջ 2.1 անգամ և գերազանցում է 2019 թվականի ցուցանիշը 37.5 %-ով կամ 33.4 մլրդ դրամով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2020 թվականին կազմել է 22.4%, որը 0.2 %-ային կետով պակաս է պետական բյուջեով ծրագրված ցուցանիշից, 0.8 %-ային կետով պակաս է ՄԺԾԾ-ով ծրագրված մակարդակից և 0.1 %-ային կետով գերազանցում է 2019 թվականի փաստացի մակարդակը:

2020 թվականին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 471.6 մլրդ դրամ՝ 2019 թվականի մակարդակին զիջելով 0.6 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 123.6 մլրդ դրամ՝ 2019 թվականի մակարդակին զիջելով 3.1 %-ով, ,
- շահութահարկից մուտքերը կազմել են 148.8 մլրդ դրամ՝ 2019 թվականի մակարդակին զիջելով 17.9 %-ով, ,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 411.5 մլրդ դրամ՝ 2019 թվականի մակարդակը գերազանցելով 0.4 %-ով,

ԱԺԲԳ









- մաքսատուրքերից մուտքերը կազմել են 68.3 մլրդ դրամ՝ 2019 թվականի ցուցանիշին զիջելով 28.2 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 53.1 մլրդ դրամ՝ 2019 թվականի ցուցանիշին զիջելով 8.9 %-ով, ,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 26.6 մլրդ դրամ՝ 2019 թվականի ցուցանիշին զիջելով 8.3 %-ով, ,
- նպատակային սոցիալական վճարներից մուտքերը կազմել են 24.8 մլրդ դրամ, 2019 թվականի ցուցանիշը գերազանցելով 32.6 %-ով,
- այլ հարկային եկամուտների գծով մուտքերը կազմել են 24.0 մլրդ դրամ՝ 2019 թվականի ցուցանիշին զիջելով 0.8 %-ով, ,
- պետական տուրքերից մուտքերը կազմել են 33.4 մլրդ դրամ, 2019 թվականի ցուցանիշին զիջելով 27.2 %-ով:

2020 թվականին պետական բյուջի ծախսերում 1 տրիլիոն 668.5 մլրդ դրամը կազմել են ընթացիկ ծախսերը, որոնք հաստատված ցուցանիշը գերազանցում են 6.4 %-ով, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցում են 16.1 %-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 226.1 մլրդ դրամ՝ շուրջ 21.4 % պակաս հաստատված մակարդակից, որը սակայն 17.6 %-ով ավել է 2019 թվականի փաստացի մակարդակից: Ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2020 թվականին կազմել են 227.7 մլրդ դրամ՝ 20.8 % պակաս հաստատվածից, սակայն 18.4 %-ով ավել քան 2019 թվականին էր:

2020 թվականի պետական բյուջեի ծախսերում՝

- 344.3 մլրդ դրամ տրամադրվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Կատարողականը հաստատվածի նկատմամբ կազմում է 95.2 %, իսկ 2019 թվականի համեմատ ավել է 7.6 %-ով,
- 125.5 մլրդ դրամ տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին: Կատարողականը հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 64.3 %, իսկ 2019 թվականի նկատմամբ՝ 112.2 %,

ԱԺԲԳ









Կետագծերով ներկայացված են պետական բյուջեով ծրագրված մակարդակները

- 387.7 մլրդ դրամ տրամադրվել է պաշտպանության բնագավառին: Կատարողականը հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 125.9 %, իսկ 2019 թվականի համեմատ ավել է 22.9 %-ով,
- հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին տրամադրվել է 151.4 մլրդ դրամ, որը հաստատված ցուցանիշից պակաս է 0.7 %-ով, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցում է 5.4 %-ով,
- 4.4 մլրդ դրամ տրամադրվել է շրջակա միջավայրի պաշտպանությանը: Կատարողականը հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 36 %. իսկ 2019 թվականի մակարդակից պակաս է 23.9 %-ով,
- 8.9 մլրդ դրամ տրամադրվել է բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին, ինչը հաստատված ցուցանիշից պակաս է՝ 61.2 %-ով և 2019 թվականի մակարդակից պակաս է 45.2 %-ով,
- 148.2 մլրդ դրամ տրամադրվել է առողջապահությանը, ինչը կազմում է հաստատված մակարդակի 130.3 %-ը, իսկ 2019 թվականի համապատասխան ցուցանիշին գերազանցում է 49.3 %-ով
- 546.6 մլրդ դրամ տրամադրվել է սոցիալական պաշտպանությանը, որը կազմում է հաստատված ցուցանիշի՝ 111.1 %-ը և 2019 թվականի՝ 109 %-ը,
- 129.3 մլրդ դրամ տրամադրվել է կրթությանը, որը կազմում է ճշտված պլանի 81.8 %-ը, հաստատված ցուցանիշի՝ 91.2 %-ը և 2018 թվականի՝ 120.4%-ը,
- 33. 6 մլրդ դրամ տրամադրվել է հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին: Արդյունքում, հաստատված ցուցանիշը գերազանցվել է 8.7 %-ով, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցվել է 0.2 %-ով:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 164.3 մլրդ դրամ, որը 14.5 %-ով ավել է ծրագրված մակարդակից և 18.5 %-ով ավել է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3 տրիլիոն 163.4 մլրդ դրամ, որը 14.6 %-ով ավել է ծրագրված մակարդակից, իսկ 2019 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 14 %-ով,
- ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 1000.9 մլրդ դրամ, որը ծրագրված մակարդակից ավել է 14.4 %-ով, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցում է 35.8 %-ով,

ԱԺԲԳ









- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կազմել է 7 միլիարդ 968.5 մլն, որը 4.4 %-ով ավել է ծրագրված մակարդակից և 8.8 %-ով ավել է 2019 թվականի համապատասխան ցուցանիշից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 6 մլրդ 53.1 մլն ԱՄՆ դոլար, որը 4.5 %-ով ավել է ծրագրված մակարդակից, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցում է 4.6%-ով,
- ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 1 մլրդ 915.3 մլն ԱՄՆ դոլար, որը 4.3 %-ով ավել է ծրագրված մակարդակից և 2019 թվականի մակարդակը գերազանցում է 24.7 %-ով,
- ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 923.9 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 7 մլրդ 508.5 մլն), որը 7.9 %-ով ավել է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, 14.8 %-ով ավել է ծրագրված մակարդակից, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցում է 19.7 %-ով,
- ՀՀ ԿԲ արտաքին պարտքը կազմել է 240.4 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 459.9 մլն), որը ծրագրված մակարդակը գերազանցում է 11.3 %-ով, իսկ 2019 թվականի ցուցանիշը գերազանցում է 2.3 %-ով,
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 923 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 6 մլրդ 53.1 մլն), որը 14.9 %-ով ավել է ծրագրված մակարդակից, 4.4 %-ով ավել է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից և 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 15.1 %-ով;
- ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1000.9 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 1 մլրդ 915.3 մլն), որը 19.5 %-ով ավել է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, 14.4 %-ով գերազանցում է ծրագրված մակարդակը և 35.8 %-ով գերազանցում է 2019 թվականի մակարդակը:

Կետագծերով ներկայացված են պետական բյուջեով ծրագրված մակարդակները

ԱԺԲԳ









2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 67.3 %, որը 16.1 %-ային կետով ավել է ծրագրված մակարդակից, իսկ 2019 թվականի համապատասխան ցուցանիշին գերազանցում է 13.8 %-ային կետով,
- ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 51.2%՝ 12.3 %-ային կետով ավել քան ծարագրվել էր պետական բյուջեով և 9.0 %-ային կետով ավել քան 2019 թվականին էր,
- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է, 2020 թվականին արձանագրվել է 63.5 %-ի մակարդակում, որը 15.3%-ային կետով գերազանցում է ծրագրված մակարդակը, 11.4 %-ային կետով ավել է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, իսկ 2019 թվականին համապատասխան ցուցանիշից ավել է 13.6 %-ային կետով;

ԱԺԲԳ





2020թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 47.3 %՝ 11.4 %-ային կետով ավել քան ծարագրվել էր պետական բյուջեով և 8.6 %-ային կետով ավել քան 2019 թվականին էր:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է նաև ՀՀ կառավարության պարտքի կառուցվածը, ըստ որի ՀՀ կառավարության ներքին պարտքը պետք է լիներ առնվազն 20 %: 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության ներքին պարտքը ՀՀ կառավարության պարտքի մեջ կազմել է 25.5 %, որը ծրագրված մակարդակից պակաս է 0.1 %-ային կետով, իսկ 2019 թվականի մակարդակը գերազանցում է 3.0 %- ային կետով: Սա փաստում է, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարումն իրականացվում է սահմանված ուղենշային ցուցանիշների տիրույթում:

*Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ 2017-2020թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, ՀՀ 2020 թ. և 2021թ. հաստատված պետական բյուջեները, 2020-2022թթ. ՄԺԾԾ-ն և ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության կայքի տվյալները ու Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2021 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների վերաբերյալ զեկույցը: